


Դոհայի համաձայնագիրը որպես ԱՄՆ ռազմավարական շահերի ապահովման ուղի Աֆղանստանում

Մաթևոսյան Հարություն Ա.

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, ասպիրանտ

 <https://orcid.org/0009-0006-2840-8245>

harutmatevosyan9@gmail.com

ՀՏԳ՝ 94 (5); EDN: FDZHRL

DOI: 10.58587/18292437-2025.1-27

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Տալիբան, Միացյալ Նահանգներ, Աֆղանստան, զինված ուժերն, Դոհայի համաձայնագիր, ահաբեկչություն, Դոնալդ Թրամփ

Дохийское соглашение как способ обеспечения стратегических интересов США в Афганистане

Матевосян Арутюн А.

аспирант, Институт Востоковедения, НАН РА (Ереван, РА)

Аннотация. Одним из наиболее значимых событий в американской политике последних лет является подписание Дохийского соглашения. Оно положило конец конфликту в Афганистане, который длился более 30 лет. Мнения о соглашении разделились как в американском обществе, так и в политической элите. Прошло четыре года с момента подписания соглашения, и сразу после вывода американских войск в 2021 году Афганистан оказался под контролем Талибана, что вызвало широкую критику со стороны различных слоев общества, хотя некоторые назвали это успехом американской политики. После почти двух десятилетий войны это соглашение рассматривалось как самый быстрый способ для США выйти из конфликта. Хотя соглашение было оформлено как мирное, оно также в значительной степени соответствовало национальным интересам США. Анализируя стратегические мотивы, лежащие в основе соглашения, в данной статье утверждается, что Дохийское соглашение отражает тактическую победу Соединённых Штатов, обеспечивающую их основные интересы и отказ от долгосрочных проектов по государственному строительству. Как внутренние, так и внешние факторы имеют важное значение для реализации этой стратегии.

Ключевые слова и словосочетания: Талибан, Соединенные Штаты, Афганистан, вооруженные силы, Дохийское соглашение, терроризм, Дональд Трамп

The Doha Agreement as a Path to Safeguarding U.S. Strategic Interests in Afghanistan

Matevosyan Harutyun A.

NAS RA, Institute of Oriental studies, PHD student (Yerevan, RA)

Abstract. One of the most significant events in recent years of American policy is the signing of the Doha Agreement. It ended a conflict in Afghanistan that had lasted for more than 30 years. Opinions regarding the agreement are divided, both in American society and within the political elite. Four years have passed since the signing of the agreement, and immediately after the withdrawal of American troops in 2021, Afghanistan fell under the control of the Taliban, which faced widespread criticism from various segments of society, while some called it a success of American policy. After nearly two decades of war, this agreement was seen as the quickest way for the U.S. to exit the conflict. Although the agreement was framed as a peace deal, it was also closely aligned with U.S. national interests. Analyzing the strategic motivations behind the agreement, this article argues that the Doha Agreement reflects a tactical victory for the United States, securing its core interests while abandoning long-term state-building projects. Both internal and external factors are crucial for the realization of this strategy.

Keywords & phrases: Taliban, United States, Afghanistan, armed forces, Doha agreement, terrorism, Donald Trump

Նախաբան

Ամերիկյան քաղաքականության շրջադարձային կետերից մեկը 2001 թ.-ի սեպտեմբեր 11-ի ահաբեկչական գործողություններն էին: Այս ամենի արդյուքնում փոխվեց Միացյալ Նահանգների քաղաքական մոտեցումները Աֆղանստանի վերաբերյալ, ինչի արդյունք ընդամենը մեկ ամիս անց ամերիկյան և կոլաբորացիոն ուժերը սկսեցին հատուկ գործողություններ իրականացնել Աֆղանստանում, որի հետևանքով

իշխանությունից հեռացվեց Տալիբան խմբավորումը: Ամերիկյան խաղաղության հաստատման շրջանը տևեց Աֆղանստանում մոտ 20 տարի, որի ընթացքում ամերիկյան կողմից իրականացվեցին մի շարք դիվանագիտական և ռազմական գործողություններ, որոնց գլխավոր նպատակը Տալիբանի և մյուս ահաբեկչական խմբերի լիակատար ոչնչացումն էր: Այնուամենայնիվ, դեռևս 2011 թ.-ից հատկապես Ուսամա բեն Լադենի սպանությունից և Իրաքում ամերի-

կյան գորքերի հեռանալուց հետո ամերիկյան քաղաքականությունը նպատակաուղղված էր Աֆղանստանում ռազմական ներկայության նվազեցմանը: Դեռևս 2018 թ.-ին սկսվեցին ակտիվ բանակցություններ, որոնք շարունակվեցին մոտ երկու տարի որոշակի ընդհատումներով: Ուստի, այս համատեքստում շատ կարևոր է հասկանալ ի՞նչու ամերիկյան կողմը գնաց գորքերի դուրսբերման հրատապ լուծման, շատերը այն համարում են ձախողում, արդյոք սա ռազմավարական ձախողում էր թե՞ մարտավարական հաղթանակ, որով Միացյալ Նահանգները փորձ արեց դուրս գալ նահանգացած և հոգնացուցիչ պատերազմից:

Դոհայի համաձայնագրի հիմնական բաղադրիչները

2020 թ.-ի փետրվարի 29-ին Կատարի մայրաքաղաք Դոհայում մի կողմից Միացյալ Նահանգների և մյուս կողմից Տալիբան խմբավորման միջև ստորագրվում է «Աֆղանստանում խաղաղություն հաստատելու համաձայնագիր», որը հասարակական շրջանակներում հայտնի դարձավ Դոհայի համաձայնագիր անվանումով [2]: Համաձայնագիրը, որի բանակցությունները տեղի ունեցան ավելի քան մեկ տարի տևող շրջափուլերի ժամանակ, իր հիմնական ձևակերպումը ստացավ առաջնային չորս բաղադրիչների հիման վրա [7]:

Դրանք են՝

- **ԱՄՆ և կռակիցիոն ուժերի հեռաքշում:** ԱՄՆ-ն համաձայնեց իր զինված ուժերի փուլային հետքաշմանը՝ 135 օրվա ընթացքում կրճատելով գորքերի թիվը 13,000-ից մինչև 8,600, իսկ 14 ամսվա ընթացքում իրականացնելու ամբողջական հետքաշում:

- **Տալիբանի կողմից հակահաբեկյան գործողությունների պարտավորություն:** Փոխարենը, Տալիբանը պարտավորվեց թույլ չտալ, որ ահաբեկչական խմբավորումները, ինչպես ալ-Կաիդան, օգտագործեն Աֆղանստանի տարածքը՝ ԱՄՆ անվտանգությանը սպառնալիք հանդիսանալու համար, ինչը կարևոր մտահոգություն էր 9/11-ի հետևանքներից հետո:

- **Ներ-Աֆղանական բանակցություններ:** Համաձայնագիրը կարևորում էր, որ Աֆղանստանի ապագա կառավարությունը որոշվի միջկառավարական բանակցությունների միջոցով, որոնք ներառում էին Տալիբանի և Աֆղանստանի կառավարության միջև երկխոսությունը ԱՄՆ-ի աջակցությամբ:

- **Բանտարկյալների ազատ արձակում:** Ավելի վիճահարույց կետերից մեկը վերաբերում էր բանտարկյալների փոխանակմանը, որի համաձայն մինչև 5,000 Տալիբանի մարտիկներ պետք է ազատ արձակվեին Աֆղանստանի կառավարության կողմից:

Սկզբունքորեն ամերիկա-տալիբանյան բանակցությունները շարունակվում էին այս չորս հիմնական բաղադրիչների շուրջ, քանզի այս կետերի հանգուցալուծման պարագայում էր հնարավոր վերջնականորեն հասնել խաղաղության հաստատմանը Աֆղանստանում: Բանակցությունների ընթացքում ԱՄՆ-ի համար առաջնահերթ էր ստանալ երաշխիքներ, որ աֆղանական հողը չի կիրառվի ահաբեկչական կազմակերպությունների կողմից, իսկ Տալիբանի համար առաջնայինը դա ամերիկյան և կռակիցիոն գործերի շուտափույթ դուրսբերումն էր կամ ինչպես իրենք էին պնդում Աֆղանստանի օկուպացիայի դադարեցումը [15]:

Ամերիկյան հասարակության վերաբերմունքը համաձայնագրի ստորագրմանը

Համաձայնագրի ստորագրման վերաբերյալ ընկալումները բազմապիսի էին տարբեր շրջանակներում: Ըստ ամերիկյան կողմի հիմնավորման՝ իրենց գլխավոր ռազմավարական շահը, ինչպես ներառված է Դոհայի համաձայնագրում, Աֆղանստանում իր ռազմական ներգրավվածությունից կենսունակ և քաղաքականապես ապահով հեռանալն էր [2]: Ավելի քանը երկու տասնամյակ ԱՄՆ-ը խորասուզված էր պատերազմի մեջ, որը, թեև սկզբում սկսվել էր որպես պատասխան սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններին, այնուամենայնիվ, ավելի ու ավելի էր դարձել «անլուծելի», և այս հակամարտության ավարտը այդպես էլ չէր երևում: Պատերազմը մեծ վնաս էր հասցրել ԱՄՆ-ին թե՛ ֆինանսական ռեսուրսների, թե՛ մարդկային կյանքերի առումով: Մինչև 2020 թ.-ը հակամարտությունը ԱՄՆ-ին արժեցել է մոտ 2 տրիլիոն դոլար, ավելի քան 2300 ամերիկացի զինվոր սպանվել և հազարավոր մարդիկ վիրավորվել են ռազմական գործողությունների ժամանակ [5]:

Այս որոշման հասնելու դրդապատճառների վերաբերյալ ազդեցություն են ունեցել թե ներքին և թե արտաքին գործոնները: Ներքին առումով, Աֆղանական պատերազմը տարիների ընթացքում կորցրել էր ամերիկյան ժողովրդի լայն աջակցությունները՝ առաջացնելով այն, ինչը սովորաբար կոչվում է «պատերազմական հոգնածություն» [8], ինչպես ամերիկյան հասարակության, այնպես էլ քաղաքական ղեկավարության շրջանում: Թեև սկզբնական շրջանում ներխուժման նկատմամբ աջակցությունը մեծ էր, հատկապես սեպտեմբերի 11-ի հարձակումներից հետո, սակայն ժամանակի ընթացքում այն քայքայվեց, քանի որ հակամարտությունը ձգձգվեց առանց որևէ հստակ հանգուցալուծման: Աֆղանստանում կայուն, ժողովրդավարական պետություն կառուցելու բարդ և անհաղթահարելի թվացող խնդիրը սպառել էր շատերի

համբերությունը Միացյալ Նահանգներում հանգեցնելով պահպանողականների և լիբերալների կողմից Աֆղանստանից զորքերը դուրս բերելու կոչերին: 2019 թ.-ին, երբ ԱՄՆ-ի զինված ուժերի դուրսբերումը Աֆղանստանից դեռ քննարկման փուլում էր, լիբերալների և դեմոկրատների շրջանում մեծ բանավեճ ծավալվեց դրա հնարավոր հետևանքների վերաբերյալ: Շատ դեմոկրատներ, հատկապես առաջադեմ թևը, կողմ էին ռազմական ներգրավվածության դադարեցմանը՝ արտացոլելով հասարակության ընդհանրական տրամադրությունները: 2019 թ.-ի Pew-ի իրականացրած հետազոտությունը ցույց էր տալիս, որ ամերիկացիների, այդ թվում՝ վետերանների 59%-ը կարծում էր, որ Աֆղանստանի պատերազմը այլևս արժանի չէ մեծածավալ ծախսերի, ինչը մատնանշում էր հակապատերազմական տրամադրությունների աճը, հատկապես դեմոկրատների շրջանում [13]:

Այնուամենայնիվ, որոշ մտահոգություններ կային զինված խմբերի դուրսբերման իրականացման վերաբերյալ: Տարբեր փորձագետներ կարծում էին, որ ԱՄՆ ուժերի շուտափույթ դուրսբերումն առանց խաղաղության համաձայնագրի կարող էր հանգեցնել անկայունության, Քարուլում տեղի իշխանության թուլացման և իսլամական ծայրահեղական խմբերի ակտիվացման: Այս անհանգստությունները էլ ավելի էին ծանրացնում ստեղծված իրավիճակը, և որոշ դեմոկրատներ գոյշություն էին ցուցաբերում կտրուկ դուրսբերման հնարավոր հետևանքների վերաբերյալ [11]: Մինչև 2021 թ.-ը, երբ ամերիկյան զորքերի դուրսբերումը տեղի ունեցավ Բայդենի վարչակազմի օրոք, դեմոկրատների 70%-ը կողմ էր դուրսբերմանը, սակայն ստեղծված քաոսային իրավիճակով պայամանավորված, սկսեցին լրջորեն քննադատել՝ հատկապես Քարուլի անկման և Տալիբանի իշխանության վերադարձի պատճառով: Այս տեսակետները, որոնք ձևավորվել էին 2019-2021 թ.-ներին, ցույց են տալիս, որ դեմոկրատների շրջանում մեծամասնությունը կողմ էր դուրսբերմանը, սակայն մտահոգված էր դրա կազմակերպման մեխանիզմներով:

Ամերիկյան ներկայության վերաբերյալ դժգոհությունները արտացոլվում էին ոչ միայն քաղաքական վերնախավի շրջանում, այլ նաև հենց ամերիկյան հասարակության լայն շրջանակներում: Հանրության համար տարակուսելի էր, թե ինչու է Միացյալ Նահանգները շարունակում միլիարդավոր դոլարներ ներդնել և վտանգել հազարավոր ամերիկացիների կյանքը մի հակամարտությունում, որը արդեն կորցրել էր իր սկզբնական հիմնավորումը, այն է՝ ալ-Կաիդայի պարտությունը և ԱՄՆ-ի տարածքում հետագա ահաբեկչական հարձակումների կանխումը: Դեռևս 2013թ.-ին ABC News/Washington

Post-ի հարցումը ցույց է տալիս, որ հանրային դժգոհությունը Աֆղանստանի պատերազմի վերաբերյալ զգալի է [9]: Հիմնական արդյունքներն են՝

- 67% ամերիկացիներից կարծում է, որ Աֆղանստանի պատերազմը շարունակելը անիմաստ է, ինչը ամենաբարձր ցուցանիշն է 2007 թ.-ից սկսած հարցումների ընթացքում:

- 43% ասում է, որ պատերազմը նպաստել է ԱՄՆ-ի երկարաժամկետ անվտանգության ապահովմանը, ինչը ամենացածր ցուցանիշն է 2010 թ.-ից սկսած հինգ հարցումներում: Միայն 17%-ն է կարծում, որ պատերազմը «շատ մեծ չափով» նպաստել է անվտանգությանը:

- 53% ամերիկացիները նախընտրում են Աֆղանստանում թողնել որոշ ամերիկացի զինվորներ՝ վարժանքների և հակաահաբեկչական նպատակներով, մինչդեռ 43% ցանկանում է զորքերի ամբողջական դուրսբերում:

ԱՄՆ-ի ռազմավարական նպատակները համաձայնագրի տեսքում

2020 թ.-ին աշխարհաքաղաքական իրավիճակը ևս որոշակի փոփոխությունների էր ենթարկվել: Չինաստանի տնտեսական հարաճուն զարգացումը, ինչպես նաև Ռուսաստանի կողմից ազդեցության ոլորտների ընդլայնումը պահանջում էր ԱՄՆ քաղաքականություն մշակողների ուշադրությունն ու ռեսուրսները: Բացի այդ, ԱՄՆ-ը բախվում էր մի շարք ներքին մարտահրավերների: Այս համատեքստում Աֆղանստանում երկարատև ռազմական ներկայությունը ինքնին անհիմն էր թվում: ԱՄՆ-ն այլևս չէր կարող արդարացնել պատերազմի հսկայական ծախսերը՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ ռազմավարական դիտանկյունից, քանի որ բախվում էր միջազգային և ներքին մտահոգություններին:

Դոհայի համաձայնագիրը ԱՄՆ-ին թույլ տվեց իրականացնել զորքերի աստիճանական դուրսբերում՝ խուսափելով հապճեպ նահանջ իրականացնելու տպավորությունից: Այս աստիճանական կրճատումը, որն սկսվեց ԱՄՆ-ի զորքերի քանակի նվազեցմամբ՝ 13,000-ից մինչև 8,600՝ 135 օրվա ընթացքում, նախատեսված էր ցույց տալու դուրսբերման գործընթացի կարգավորված և վերահսկվող տեսքը [2]: ԱՄՆ վարչակազմը կարող էր ներկայացնել զորքերի դուրսբերումը որպես փուլային և պայմանավորված Տալիբանի կողմից անվտանգության որոշակի չափանիշներին համապատասխանելուն, ինչը թույլ էր տալիս պնդել, որ ԱՄՆ-ը պարզապես չի լքում Աֆղանստանը, այլ անցնում է հակաահաբեկչական ռազմավարությանն ուղղված աջակցությանը:

Այս փուլային մոտեցումը կարևոր էր ԱՄՆ-ի գործողությունների հաջողված տեսքի պահպանման համար: 2001 թ.-ին ԱՄՆ ներ-

խուժման հայտարարված գլխավոր նպատակը Աֆղանստանում ալ-Կաիդայի գործողությունների բազայի վերացումն էր և ապագա հարձակումների կանխարգելումը: Դոհայի համաձայնագիրը թույլ տվեց ԱՄՆ-ին հայտարարել, որ այդ նպատակն իրականացվել է, թեև քննադատները պնդում էին, որ Տալիբանի վերածնունդը և այլ ծայրահեղական խմբավորումների առկայությունը հակառակն են ցույց տալիս:

ԱՄՆ-ի համար Դոհայի համաձայնագրում արձանագրված Տալիբանի հանձնառությունը, որը նախատեսում էր Աֆղանստանի տարածքի օգտագործման կանխում ահաբեկչական կազմակերպությունների, մասնավորապես ալ-Կաիդայի կողմից՝ ԱՄՆ-ի կամ նրա դաշնակիցների վրա հարձակումներ սկսելու համար [14, էջ 42], վերաբերում էր Վաշինգտոնի հիմնական ազգային անվտանգության մտահոգությանը 9/11-ից հետո՝ կանխելու Աֆղանստանի վերածումը գոբալ ահաբեկչական կազմակերպությունների անվտանգ հենակետի: Չնայած շատ քննադատներ հարցեր էին բարձրացնում Տալիբանի անկեղծության և այս խոստումը իրականացնելու կարողության վերաբերյալ, ԱՄՆ-ը կարողացավ ներկայացնել դա որպես Տալիբանի նշանակալի գիշում [6, էջ 195]: Տալիբանից այդ հանձնառությունները ձեռք բերելով՝ ԱՄՆ-ը կարողացավ արդարացնել իր դուրսբերումը ոչ միայն ռազմավարական իմաստով, այլև որպես իր հիմնական անվտանգային շահերի պահպանման տեսանկյունով: Համաձայնագիրը թույլ տվեց ԱՄՆ-ին անցնել ավելի հակա-ահաբեկչական ռազմավարության, սպալիներով հետախուզությանը, օդային հարվածներին և հատուկ ուժերի գործողություններին անհրաժեշտության դեպքում, առանց ծախսատար ցամաքային ներկայության:

Դոհայի համաձայնագրի կարևոր ենթատեքստերից մեկը ԱՄՆ-ի լայնամասշտաբ ռազմավարական նախագծերից մեկի շրջադարձն էր՝ խուսափել Աֆղանստանում ազգաշինության նախագծից [19]: Աֆղանական պատերազմի ընթացքում ԱՄՆ-ը ներդրեց մոտ \$2 տրլն դոլար՝ ոչ միայն Տալիբանի պարտության, այլև Աֆղանստանի պետական հաստատությունների, այդ թվում՝ զինված ուժերի, կառավարման կառուցվածքների և տարբեր պետական մեխանիզմների վերակառուցման համար [10]: Չնայած այս ծախսերին, որոնք նախատեսված էին երկրի կայունացումը և վերակառուցումը ապահովելու համար, Աֆղանստանի կառավարությունը շարունակեց մնալ թույլ, կոռումպացված և հենվել միայն ԱՄՆ-ի ֆինանսական աջակցության վրա [16]:

Սկզբունքորեն, ԱՄՆ-ի հաջորդող վարչակազմերի համար դարձավ ակնհայտ, որ ազգաշինության նախագիծը Աֆղանստանում «անտեսանելի» էր և չէր կարող հասնել ակնկալվող արդյունքներին: Դոհայի համաձայնագիրը, հետևաբար, առաջարկեց ԱՄՆ-ին հնարավորություն՝ վերանայել և հարմարեցնել իր ռազմավարական նպատակները: Համաձայնագրի միջոցով ԱՄՆ-ը կարողացավ դուրս գալ ծախսատար և անկայուն իրավիճակից Աֆղանստանի վերակառուցման համար, հատկապես այն ժամանակ, երբ միջազգային աշխարհաքաղաքական դաշտը ակտիվ գործընթացների մեջ էր: Դոհայի համաձայնագիրը թույլ տվեց նաև ԱՄՆ-ին վերադառնալ դեպի նոր ռազմավարական հնարավորություններին, հատկապես Խաղաղ-հնդկական տարածաշրջանում, վերաբաշխելով իր ռեսուրսները՝ ավելի արդյունավետ կերպով արձագանքելու նոր աշխարհաքաղաքական փոփոխություններին և սպառնալիքներին, որոնք ձեռք էին բերել մեծ կարևորություն:

Դոհայի համաձայնագիրը դիտվում էր որպես նշանակալի քաղաքական հաղթանակ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմի համար, որը համընկնում էր նրա նախընտրական խոստման հետ՝ վերադարձնելու ԱՄՆ զինվորներին տուն [12]: Պատերազմը Աֆղանստանում աճող անհանգստություն էր առաջացրել ամերիկյան հանրության շրջանում, որտեղ ինչպես պահպանողական, այնպես էլ առաջադեմ ընտրողներն պահանջում էին ռազմական ներգրավվածության ավարտը: Ռազմական լուրջ խնդիրների պատճառով ԱՄՆ-ի ներգրավվածությունը Աֆղանստանում սկսել էր կասկածի տակ դրվել, և շատերն սկսեցին հարցեր առաջացնել դրա շարունակականության նպատակահարմարության վերաբերյալ: Դոհայի համաձայնագիրը հնարավորություն էր տալիս Թրամփի վարչակազմին իրականացնել իր «ԱՄՆ-ն առաջինը» արտաքին քաղաքականությունը՝ ավարտելով ծախսատար օտարերկրյա ներգրավվածությունները և կետնորոնանալով ներքին առաջնահերթություններին [3]:

Համաձայնագիրը թույլ տվեց նախագահ Թրամփին և նրա վարչակազմին ներկայացնել գործերի դուրսբերումը որպես իրենց արտաքին քաղաքականության հաջողություն, որը կարևորում էր ծախսատար օտարերկրյա ներգրավվածությունների ավարտը և առաջնային ուշադրության կենտրոնացումը ամերիկյան շահերին [17]: ԱՄՆ զինվորների դուրսբերման համաձայնությունը, որը համարվում էր որպես նրա խոստման իրականացման ապացույց, թույլ տվեց վարչակազմին պնդել, որ այն արդյունավետ կերպով իրականացնում

է իր քաղաքականությունը՝ նվազեցնելով Ամերիկայի ռազմական ներկայությունը արտերկրում և անդրադառնալով ընտրողների պահանջներին, ովքեր կտրուկ քննադատում էին երկարատև օտար հակամարտությունները:

Բացի այդ, համաձայնագիրը մշակվել էր այնպես, որ ԱՄՆ-ը համաձայնություն չհայտնի Տայիբանի մեծ պահանջներին, ինչպիսիք են միջազգային ճանաչումը [1, էջ 29]: Այս մոտեցումը թույլ տվեց ԱՄՆ-ին պահպանել կարևոր դիվանագիտական ազդեցություն տարածաշրջանում, նույնիսկ զինվորական ներկայության նվազման դեպքում: Փուլային դուրսբերման գործընթացը, որը պայմանավորված էր Տայիբանի կողմից հակահասարակական անվտանգություն սպառնալիքների կատարմամբ, ապահովեց, որ ԱՄՆ-ն շարունակաբար ազդի և հսկի այն գործընթացները Աֆղանստանում, նույնիսկ այն պարագայում, որը նրա անմիջական ռազմական մասնակցությունը նվազեց: Այս ռազմավարությունը օգնում է պահպանել ԱՄՆ-ի ռազմավարական շահերը և ապահովել, որ նրա ազդեցությունը չնվազի տարածաշրջանում գործերի կրճատմամբ:

Ավելին, Դոհայի համաձայնագիրը, բացի ռազմական դուրսբերումից և Աֆղանստանի ապագայի պատասխանատվությունը Աֆղանստանի կառավարության և Տայիբանի վրա թողնելուց, արտացոլում է ԱՄՆ-ի ավելի լայն ռազմավարական փոփոխությունը: Նկատի ունենալով կիրբերանվտանգության, կլիմայի փոփոխության և COVID-19 համաճարակի նման խնդիրների լուծման անհրաժեշտությունը՝ ԱՄՆ քաղաքական գործիչները առավել գիտակցում էին նոր աշխարհաքաղաքական մարտահրավերներին առաջնահերթություն տալու կարևորությունը [4]:

Եզրակացություն

Ավարտելով իր ռազմական ներգրավվածությունը Աֆղանստանում՝ ԱՄՆ-ն վերաբաշխեց և՛ ֆինանսական, և՛ ռազմական ռեսուրսները, որոնք կարող էին ուղղվել այլ հատվածներում: Աֆղանստանից հեռանալու որոշումը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ավելի մեծ վերահաշվարկի մի մասն էր, որն ավելի մեծ շեշտադրում էր դնում մեծ տերությունների մրցակցության հետևանքով առաջացած մարտահրավերների լուծման վրա, հատկապես Հնդկ-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Թեև Դոհայի համաձայնագիրը կարող էր չհանգեցնել կայուն և խաղաղ Աֆղանստանի ստեղծման, այնուամենայնիվ այն ծառայում էր Միացյալ Նահանգների անմիջական շահերին: Ապահովելով փուլային դուրսբերում, հակահարեկչական երաշխիքներ և վերջ դնելով

«թանկարժեք» ազգի կառուցման նախագծին՝ ԱՄՆ-ը հասավ մի քանի հիմնական նպատակների, որոնք պատերազմի վերջին փուլերում կենտրոնական էին դարձել նրա արտաքին քաղաքականության համար: Զննադատներն իրավացիորեն նշում են համաձայնագրի թերությունները, հատկապես Աֆղանստանի ապագայի վրա դրա ազդեցության և քաղաքացիական ազատությունների պաշտպանության առումով: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի տեսանկյունից համաձայնագիրը թույլ տվեց Վաշինգտոնին դուրս գալ երկարատև հակամարտությունից՝ միաժամանակ պահպանելով սահարեկչության սպառնալիքներին արձագանքելու և նոր ռազմավարական առաջնահերթությունների վրա կենտրոնանալու իր կարողությունը: Այս առումով Դոհայի համաձայնագիրը կարող է դիտվել որպես ԱՄՆ-ի մարտավարական հաղթանակ, նույնիսկ եթե Աֆղանստանի համար երկարաժամկետ հետևանքները շարունակեն մնալ անորոշ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Մաթևոսյան Հ.**, «ԱՄՆ-Տայիբան հարաբերությունների բարդ դինամիկան 1996-2001 թթ.»։ Էջեր 28-33: // Научно-аналитический журнал «Регион и мир», 2024: Հատ. ԺԵ, հմ 4 (53): - 228 էջ:
2. Joint Declaration between the Islamic Republic of Afghanistan and the United States of America For Bringing Peace to Afghanistan, <https://www.state.gov/wp-content/uploads/2020/02/02.29.20-US-Afghanistan-Joint-Declaration.pdf> (դիտման ամսաթիվ՝ 29.02.2020).
3. "US election 2016: Trump details 'America First' foreign plan". BBC News. <https://www.bbc.com/news/election-us-2016-36152947> (բեռնման օրը՝ 28.04.2024).
4. **Anthony H. Cordesman and Grace Hwang**, Chinese Strategy and Military Forces in 2021, Center for Strategic and International Studies, 03 August 2021.
5. BBC News, 'Afghanistan: What has the conflict cost the US and its allies?' <https://www.bbc.com/news/world-47391821> (դիտման ամսաթիվ՝ 03.08.2024).
6. **Carter Malkasian**, The American War in Afghanistan: A History, 2021, Oxford University Press. p.195.
7. Crisis group, 'Afghanistan Peace Talks Since 2018: A Timeline', <https://www.crisisgroup.org/asia/south-asia/afghanistan/afghanistan-between-february-2018-and-august-2020-timeline>, (դիտման ամսաթիվ՝ 11.08.2024).
8. **Field Manual**, Combat and Operational Stress Control Manual for Leaders and Soldiers. Department of the Army Headquarters, Washington, DC, 18 March 2009. p 12.

9. **Greg Holyk**, ‘Afghan War Fatigue Hits New High, Matching Levels Last Seen in Iraq’, ABC News, 23 July 2013, <https://abcnews.go.com/blogs/politics/2013/07/afghanistan-war-fatigue-hits-new-highs-now-matching-levels-last-seen-in-iraq>. (նիսման ամսաթիվ՝ 23.08.2024).
10. Human and Budgetary Costs to Date of the U.S. War in Afghanistan, 2001-2022, <https://watson.brown.edu/costsofwar/figures/2021/human-and-budgetary-costs-date-us-war-afghanistan-2001-2022> . (նիսման ամսաթիվ՝ 02.08.2024).
11. **James Dobbins, Jason H. Campbell, Sean Mann, Laurel E. Miller**, ‘Consequences of a Precipitous U.S. Withdrawal from Afghanistan’, Rand, 2019.
12. **Jeff McCausland**, ‘Trump’s Twitter promises to bring U.S. troops home make headlines. Has he kept them?’, <https://www.nbcnews.com/think/opinion/trump-s-twitter-promises-bring-u-s-troops-home-make-ncna1244572> . (նիսման ամսաթիվ՝ 25.10.2024).
13. **Katherine Schaeffer**, ‘A year later, a look back at public opinion about the U.S. military exit from Afghanistan’, Pew Research Center, 2022.
14. **Kevin D. Stringer**, ‘The American War in Afghanistan: A History’, National Defense University Press, 30 October 2023, p. 42.
15. **Shereena Qazi**, ‘Crucial talks between the US and Taliban begin in Doha’, AlJazeera, <https://www.aljazeera.com/news/2019/8/22/crucial-talks-between-the-us-and-taliban-begin-in-doha> (նիսման ամսաթիվ՝ 22.08.2024).
16. Transparency International կազմակերպության հետազոտությունը, <https://www.transparency.org/en/countries/afghanistan> :
17. Vision of Humanity, Trump’s Approach to US Military Occupation in Afghanistan, <https://www.visionofhumanity.org/trumps-perilous-approach-to-afghanistan/#:~:text=%EE%80%80The%EE%80%81%20Taliban%20negotiators>, (նիսման ամսաթիվ՝ 23.11.2024).
18. Why the US invaded Afghanistan – and a timeline of what happened from 2001 until the Taliban seized Kabul, <https://inews.co.uk/news/world/us-afghanistan-why-invade-timeline-what-happened-2001-taliban-kabul-explained-1154262> (նիսման ամսաթիվ՝ 23.10.2024).
19. **Zahid Shahab Ahmed, Faizan Fakhar, Khurram Abbas**, ‘Afghanistan (2001-2021): Challenges of Nation-Building’, ISAS Briefs, 24 January 2023.

Տճանա/Հանձնվել է՝ 01.02.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 07.02.2025

Принята/Ընդունվել է՝ 14.02.2025